

տալով վերոյիշեալ գրգռութիւնները : Հակառակ տասր, ասանք, հիւանդութեան կեղծ պատրուակին ասկ — Իրականութեան մէջ անոնց փախուտը դիւրացնելու համար — Ատանայի հիւանդանոցը փոխադրուած են :

Վարուելու այս եղանակը քաջալերութիւն մըն էր բոլոր եղեռնագործներուն :

Ատանա քաղաքին մէջ, միտպետութեան կուսասակիցները ամէն յերիւրածոյ միջոցներու ղիմնեցին՝ իսլամներու կարծիքը Հայերուն դէմ հանելու համար : Փողովուրդէն մէկ մասին կ'ըսէին թէ այգիներուն մէջ Հայ մը մեղապարտ յարարելութիւններ ունեցած էր իսլամ կիներու հետ. թէ այն հայ երիտասարդը, որ իսլամ մը սպաննած և ուրիշ մը վիրաւորած էր իր պատիւը պաշտպանելուն համար, Հայ թաղին մէջ պահուած կը մնար. թէ Հայերը մ'նծ քանակութեամբ դէնքեր գնած էին և կը պատրաստուէին յարձակիլ Իսլամներու վրայ : Աւելի վար խաւերու և շարագործութեանց ընդունակ տարրերու կ'ըսուէր թէ պէտք էր ջարդել քեաֆիրները՝ անոնց ինչքերուն տիրանալու համար. թէ Սահմանադրութիւնը, իսլամին օրէններուն հակառակ հռչակուած էր՝ ապահովելու համար քրիստոնէականներու՝ մասնաւորաբար Հայերու շահերը :

Ջարդերէն քանի մը օր առաջ, Իքիսալ թերթին խմբագրութեան կողմէ կազմակերպուած միթինկի մը մէջ, բոլոր իսլամ դասակարգերը — պաշտօնեայ, կրօնական, ղիմուոր և գործաւոր — կ'աշխատին զանգուածային յարձակման մը պատրաստուելու համար : Վալին կը հաւատէ որ դէնքերու միթերանոցը կողոպտուեցաւ այս գերագրգռուած ամբոխին կողմէ : Սակայն տրուած Ելլալով որ միթերանոցը պահպանուած էր պահակախումբի մը կողմէ, և թէ այս պահակները, ո՛վ որ ալ Ելլար, առանց դիմադրութեան մտնելու պիտի չլծողէ-